ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՀՈՒԼԻՍ 2023

## ՄԱՍ Ա: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԳԻԾՆ ՈՒ ՏԵՂԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

<table>
<tr><td colspan="2">Կառուցվածքային և վարչական</td></tr>
<tr><td>Ենթա-նախագծի վերնագիրը</td><td>ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ /ՏՏԵԶ/</td></tr>
<tr><td>Ենթանախագծի համարն ու վերնագիրը</td><td>TUR-17 : ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի կենտրոնական մասի բարեկարգում</td></tr>
<tr><td>Համայնք</td><td>ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայր</td></tr>
<tr><td>Տեղանքում նախատեսվող գործողությունների շրջանակը</td><td>Ենթածրագրով իրականացվելու է Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածի, այդ թվում 19-րդ դարի Սբ. Հարություն եկեղեցուն հարող տարածքի բարեկարգում, ճանապարհների և մայթերի ծածկույթների փոխարինում, ընդհանուր օգտագործման տարածքների կանաչապատում և կահավորում, համայնքային զբոսայգու կառուցում, բարեկարգում և կահավորում, արտաքին լուսավորության կազմակերպում, ինժեներական գծերի կառուցում և/կամ կանոնակարգում<br>Շինարարական աշխատանքները կընդգրկեն հետևյալը
<table>
<tr><td>Հիմնարական ճանապարհի բետոնապատում</td><td>1475,7</td><td>մ2</td></tr>
<tr><td>Ասֆալտապատում</td><td>465,2</td><td>մ2</td></tr>
<tr><td>Երկրորդական ճանապարհների հարթեցում</td><td>1569,35</td><td>մ2</td></tr>
<tr><td>Բազալտ քարով մայթերի շարում</td><td>1900</td><td>մ2</td></tr>
<tr><td>Ճանապարհների համար արտաքին լուսավորության անցկացում, քայլուղիներ և պուրակ /պուրակ /պյուների տեղադրում</td><td>5180/67</td><td>մ/հատ</td></tr>
<tr><td>Լուսատուների և հավելյալ սարքերի մոնտաժում</td><td>158</td><td>հատ</td></tr>
<tr><td>Կանգառների կառուցում/բարեկարգում</td><td>1</td><td>հատ</td></tr>
<tr><td>Գոյություն ունեցող պուրակի բարեկարգում/խաղահրապարակի հակավորում</td><td>1008/1</td><td>մ2/հատ</td></tr>
<tr><td>Պուրակի կառուցում, ներառյալ</td><td>2027,14</td><td>մ2</td></tr>
<tr><td>Սիզամարգերի փռում /ներառյալ այգուց դուրս /</td><td>1273,03</td><td>մ2</td></tr>
<tr><td>Կահավորված խաղահրապարակ</td><td>148,46</td><td>մ2</td></tr>
<tr><td>Ամֆիթատրոն</td><td>19,31</td><td>մ2</td></tr>
<tr><td>Ջրային մակերեսներ</td><td>23,64</td><td>մ2</td></tr>
<tr><td>Ճեմուղիներ</td><td>249,0</td><td>մ2</td></tr>
<tr><td>Թեքահարթակների կառուցում</td><td>29,0/2</td><td>մ2</td></tr>
<tr><td>Հենապատի կառուցում և վերանորոգում</td><td>130,38</td><td>մ2</td></tr>
<tr><td>Ցանկապատում</td><td>226,9</td><td>մ</td></tr>
<tr><td>Նստարանների տեղադրում/ հատուկ նախագծով նստարանների նախապատրաստում</td><td>22/2</td><td>հատ/հատ</td></tr>
<tr><td>Աղբամանների տեղադրում</td><td>11</td><td>հատ</td></tr>
<tr><td>Ցայտաղբյուրների տեղադրում</td><td>2</td><td>հատ</td></tr>
</table>
</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| Ոռոգման ցանց, ստորգետնյա ջրամբարի և պոմպակայանի կառուցում | 1136/70/2 | մ2/հատ |
| Ջրամատակարարման գծերի կառուցում, դիտահորերի մոնտաժում | 74/3 | մ/հատ |
| Կոյուղագծերի մասնակի կառուցում, դիտահորերի մոնտաժում | 190/11 | մ/հատ |
| Հեղեղատար համակարգի գծերի կառուցում, /դիտահորեր/սելաֆատարների մոնտաժում | 1089/31/20 | մ/հատ/հատ |
| Գազամատակարարման գծերի ստորգետնյա վերատեղադրում | 240 | մ |
| Էլեկտրամատակարարման համար արտաքին գծերի անցկացում | 45/0,4 | մ/կվ |

Ենթանախագծով նախատեսվում է իրականացնել Հրազդան-Սևան Հ-29 հանրապետական նշանակության ճանապարհի գյուղամիջյան հատվածի, դեպի եկեղեցի տանող ճանապարհի, մայթերի վերակառուցում՝ գլխավոր ճանապարհը՝ բետոնե ծածկույթով, երկրորդական ճանապարհները և մայթերը քարե սալիկապատումով և կահավորմամբ։

Հիմնած զբոսայգու կանաչ հատվածների ոռոգումը կիրականացվի ստորգետնյա ջրամբարի և կառուցվող պոմպակայանի միջոցով։ Ըստ նախագծի, անձրևաջրերը կենթարկվեն նախնական մշակման՝ կոպճային որսիչներով, այնուհետև ինքնահոս եղանակով կթափվեն դեպի ստորգետնյա ջրամբար։ Հավաքված ջուրը կօգտագործվի ոռոգման նպատակով։ Ի հավելումն սրա, ջրամբարը կունենա տափակ փական, որը ինքնաբերաբար կփակվի, ջրամբարը լիքը լինելուն պես։ Սա թույլ կտա, որպեսզի անձրևաջրերի ավելցուկը հոսի դեպի գետ։ Ոռոգման նպատակով, ԴԱՐ հիմնադրամը /տես կից ներկայացված նյութ համար 6/ ստորգետնյա ջրերի համար հավելյալ խորքային հոր կառուցի։ Վերջինիս կառուցումը դուրս է ենթանախագծի շրջանակից։

Վերանորոգվող ճանապարհի որոշ հատվածներում նախատեսվում է տեղադրել կենցաղային կոյուղու կոլեկտորներ և դրանք միացնել հիմնական խողովակաշարին։ Կեղտաջրերը հոսում են մաքրման կայան, որտեղ եռափուլ մաքրման փուլերն անցնելուց հետո նրանք ենթարկվում են կենսաբանական մաքրման և միայն դրանից հետո թափվում են գետ։ Մաքրման կայանը տեղադրել է ԴԱՐ հիմնադրամը և այն գտնվում է դպրոցին մոտ հողատարածքում։ Կոյուղատարը կկառուցվի պոլիէթիլենի ծալքավոր SN8 տիպի ռետինի օղակներով խողովակներով, խողովակների անկյունների միացման կետերում՝ ուղղահայաց հատվածների յուրաքանչյուր 50մ վրա։

| | | | |
|---|---|---|---|
| Կառուցվածքային համաձայնագրեր (ՀԲ) | Ծրագրի ղեկավար՝ Թաֆադզվա Իրվին Դյուբ | | Երաշխիքների մասնագետ՝ Լուսինե Գևորգյան (բնապահպան) Դեվիդ Ջիջելավա (սոցիոլոգ) Սոնյա Մսրյան (սոցիոլոգ) |
| Իրականացման համաձայնագրեր | Իրականացնող կազմակերպություն՝ | Տեխնիկական վերահսկողություն | Շինարարություն իրականացնող |

| | | | |
|---|---|---|---|
| (ՀՀ) | Այա Օսիպովա /բնապահպան/<br><br>Քնարիկ Մելոյան /բնապահպան/ | իրականացնող կազմակերպություն՝ պետք է ճշտվի* | կազմակերպություն՝ պետք է ճշտվի* |

| | |
|---|---|
| **Տեղանքի նկարագրություն** | |
| Այն կառույցի անվանումը, որի օբյեկտները ենթակա են վերանորոգման | ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայր |
| Այն կառույցի հասցեն ու գտնվելու վայրը, որի օբյեկտները ենթակա են վերանորոգման | Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Ծաղկունք |
| Ո՞վ է հողի սեփականատերը Ո՞վ է հողօգտագործողը (պաշտոնապես/ ոչ պաշտոնապես) | Ծաղկունքի կենտրոնական մասն տանող ճանապարհը պետական սեփականություն հանդիսացող ճանապարհահատված է: Ենթածրագրով օգտագործվող մնացած հողերը Ծաղկունք համայնքի սեփականությունն են, ներառյալ զբոսայգու, կանգառի և դեպի եկեղեցի տանող գրունտային ճանապարհի կառուցման համար օգտոգործվող հողը:<br><br>Համայնքային ենթակառուցվածքների շինարարության աշխատանքները, ներառյալ խմելու ջրի, կոյուղու և գազամատակարարման համակարգերի կառուցումը կիրականացվի համայնքին պատկանող հողատարածքներում: Գործող խանութը, ռեստորանն ու մասնավոր տները գտնվում են այդ տեղանքում: Ռեստորանն ու խանութը օգուտ կստանան ենթանախագծից, քանի որ այն կնպաստի զբոսաշրջիկների ներհոսքին դեպի բնակավայր: Նույն նախագծով կվերականգնվեն սեփական երկու տների պատեր: Սեփական տները գտնվում են դեպի եկեղեցի տանող գրունտային ճանապարհի վրա: Ռեստորանին կից խանութի համար կկառուցվի թեքահարթակ, և բաշխիչ վահանակը կտեղադրվի խանութի պատին: Կից ներկայացվում են սեփականատերերի համաձայնությունները: (Կից ներկայացված նյութ թիվ 4).<br><br>Նախագծով արվել է կամավոր նվիրատվություն: Սույն նախագծով նախատեսված զբոսայգու շինարարական աշխատանքներն իրականացնելու նպատակով, ԴԱՐ հիմնադրամը[1] նվիրաբերել է 0.05 հեկտար մակերեսով հողակտոր: Ծաղկունք համայնքում զբոսայգու շինարարությունը հիմնադրամի ներդրումային նախագծերի նպատակներից մեկն է: Որպես նախագծի բովանդակության նախաձեռնող, ԴԱՐ հիմնադրամը պատվիրել է ենթանախագծի մշակման |

1 The DAR Foundation has implemented many charitable and development projects in Tsaghkunk community of Gegharkunik marz. The total volume of investments exceeded 1.8 milliard drams.

| | |
|---|---|
| | փաթեթը։<br><br>Ենթանախագծով նախատեսված շինարարական աշխատանքները որևէ հարկադրված վերաբնակեցման չեն հանգեցնում: Որևէ մասնավոր հողատարածք չի օգտագործվում: Ենթանախագիծը չի հանդեցնում բերքի, պտղատու ծառերի և կենցաղային այլ ենթակառուցվածքների ժամանակավոր կամ մշտական կորստի: |
| Սույն ենթածրագրի տեղանքի ֆիզիկական և բնական միջավայրի նկարագրությունը | Ծաղկունքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում, Հրազդան գետի աջ ափին: Ծաղկունքը գտնվում է Սևան քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք և մարզկենտրոն Գավառից 40 կմ դեպի հյուսիս-արևմուտք հեռավորության վրա: Գյուղը գտնվում է 1850 մ բարձրության վրա:<br><br>Առաջարկվող կառուցապատման վայրը գտնվում է Ծաղկունք գյուղի կենտրոնում: Ռելիեֆի հետ կապված առանձնահատկություններ չկան, տարածքը հարթավայրային է՝ նոսր բուսականությամբ: Գլխավոր ճանապարհի աջ հատվածում հաշվարկել ենք յոթ ծառ (բարդիներ): Ներկայումս այս հողատարածքը օգտագործվում է որպես խաղահրապարակ: Գործող երկու խանութները, ռեստորանն ու մասնավոր տները գտնվում են այդ տարածքում: Տները գտնվում են դեպի եկեղեցի տանող գրունտային ճանապարհի վրա: Մանկապարտեզի շենքը զբոսայգու բարեկարգման համար օգտագործվող հողից 30-50մ հեռավորության վրա է գտնվում:<br><br>Նախագծով նախատեսվում է վերանորոգել 19-րդ դարում կառուցված Սուրբ Հարություն եկեղեցի տանող ճանապարհը: Այնուամենայնիվ եկեղեցին ընդգրկված չէ ՀՀ Կառավարության կողմից հաստատված պատմամշակութային հուշարձանների ցանկում:<br><br>Ենթանախագծի իրականացումը չի պահանջում աշխատանքների իրականացում ՀՀ Կառավարության կողմից հաստատված պատմամշակութային հուշարձանների տարածքում: Գեղարքունիքի մարզում զբոսաշրջության աշխուժացման շնորհիվ, ավելացել է դեպի Ծաղկունք այցելությունների թիվը: Այնուամենայնիվ, գյուղի կենտրոնական մասին հարակից տարածքները բարվոք վիճակում չեն գնվում: Սա Ծաղկունք գյուղի զբոսաշրջիկների և այցելուների հիմնական գրավչությունն է, որը նպաստում է հարակից բիզնեսների աշխուժացմանը, դրանով իսկ ստեղծելով տնտեսական հնարավորություններ բնակիչների համար:<br><br>Մասնավոր ոլորտի արված խոշոր ներդրումների շնորհիվ, Ծաղկունք համայնքը վերջերս շոշափելի աճ է գրանցել ներգնա և տեղի զբոսաշրջության հաշվին: Հատկապես ակնառու է աճը գաստրոնոմիկ զբոսաշրջության բնագավառում: Գործում է «Ծաղկունք» հյուրատունը և իր ռեստորանի հետ միասին, այն արդեն իսկ դարձել է տարածքի ամենաակնառու զբոսաշրջային գրավչություններից մեկը: Ազգաբնակչության հիմնական զբաղմունքն է անասնապահությունը, մշակաբույսերի և կարտոֆիլի աճեցումը:<br><br>Ենթանախագծի նպատակը տարածքի զբոսաշրջային ենթակառուցվածքի ներգրավմամբ նպատակային կենտրոնի ստեղծումն է, զբոսայգու վերանորոգման և շուրջբոլորը նոր էլեմնտների ավելացմամբ: Սրա նպատակը |

| | |
|---|---|
| | գրոսաշրջիկների համար ժամանցային հավելյալ հնարավորություններ ստեղծելն է, միևնույն ժամանակ գրավիչ՝ լավ կահավորված միջավայրի ապահովմամբ։<br><br>Ենթանախագծի իրականացումը կնպաստի էլ ավելի մեծ թվով զբոսաշրջիկների այցելությանը (աճ՝ 25,000-ով), ինչն էլ կապահովի դրամական բարձր հոսքեր դեպի համայնքային բյուջե և պետ բյուջե՝ ստեղծելով թվով 2 մշտական և ժամանակավոր աշխատատեղեր։<br><br>Ենթանախագծի իրականացման արդյունքում ստեղծվող ենթակառուցվածքը կնպաստի համայնքային և զբոսաշրջային գործառույթներով զբաղվող կենտրոնի հիմնադրմանը։<br><br>ԴԱՐ հիմնադրամի կողմից արդեն կառուցված «Ծաղկունք» ռեստորանը, հասարակական/համայնքային այգին, վերականգնված գյուղապետարանի շենքը, նախատեսվող տուրիստական տեղեկատվական կենտրոնը, Սուրբ Հարություն եկեղեցու շենքը նոր գործառույթներով, համայնքային կենտրոնը այգում, կոմերցիոն. տարածքները (երկհարկանի շենքում) կդառնան Ծաղկունքի և հարակից համայնքների բնակիչների համար գրավիչ հաղորդակցության-հանդիպման վայր և կծառայեն Սևանի մարզ այցելող զբոսաշրջիկների համար՝ առաջարկելով ժամանակակից, բայց ազգային տարրերով համեմվածվայր։ |
| ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ | |
| Ծրագրով պահանջվող ազգային, տեղական օրենսդրություններ և թույլտվություններ, | ՀՀ հետևյալ օրենքները սահմանում են իրավական շրջանակը, որը կիրառելի է ծրագրի գործունեության համար.<br>- Մթնոլորտային օդի պաշտպանության մասին ՀՀ օրենքի (1994)<br>«Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նպատակը ՀՀ կառավարության հիմնական սկզբունքների սահմանումն է՝ ուղղված մթնոլորտային օդի մաքրության ապահովմանը և օդի որակի բարելավմանը, օդի որակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ազդեցությունների կանխարգելմանը և մեղմմանը: Սույն օրենքը նաև կարգավորում է արտանետումների լիցենզիաները և ապահովում է մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի բեռներ / կոնցենտրացիաներ և այլն:<br>Համաձայն այս օրենքի, կապալառուն պարտավոր է իրականացնել շինարարական աշխատանքներ, ինչպես նաև աղբի տեղափոխում և ժամանակավոր պահպանում փոշին և այլ արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:<br>-Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)<br>Օրենքը իրավական և տնտեսական հիմք է տալիս թափոնների հավաքման, տեղափոխման, հեռացման, մաքրման, վերաօգտագործման, ինչպես նաև թափոնների բացասական ազդեցության կանխարգելման համար՝ բնական պաշարների, մարդու կյանքի և առողջության վրա: Օրենքը սահմանում է պետական լիազոր մարմինների, ինչպես նաև թափոնների արտադրող կազմակերպությունների դերն ու պարտականությունները թափոնների կառավարման գործընթացներում:<br>Համաձայն այս օրենքի, շինարարական գործունեությունից առաջացած թափոնները պետք է վերամշակվեն ըստ անհրաժեշտության կամ |

<table>
<tr><td></td><td>տեղաhանվեն նշանակված վայրերում:<br>Ընտրված վայրերում շինարարական թափոնների և ավելցուկային նյութերի հեռացումը պետք է գրավոր հաստատվի համայնքապետարանի կողմից:<br>-Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2023)<br>Օրենքը սահմանում է գործունեության տեսակը, որը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շրջակա միջավայրի փորձաքննության: Ըստ սույն օրենքի, վերականգնման առաջարկվող աշխատանքները ենթակա չեն շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության:<br>- ՀՀ քաղաքաշինության մասին օրենք (1998)<br>ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2005)<br><br>Սույն օրենսգիրքը կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հիմքերը և դրանց իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև անվտանգության և ապահովման պայմանները: աշխատողների առողջությունը. Համաձայն այս օրենքի, Կապալառուն պետք է ապահովի շինհրապարակում աշխատող աշխատողների անվտանգությունն ու առողջությունը:<br>Համաձայն ՀՀ ազգային օրենսդրության շրջանակի՝ ենթածրագրի համար պահանջվում է.<br>- Շինարարության թույլտվություն**;<br>➢ - Շինարարական թափոնների հեռացման թույլտվություն.</td></tr>
<tr><td colspan="2">ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ</td></tr>
<tr><td>Ե՞րբ/ոտե՞ղ է հանրային քննարկումը տեղի ունեցել/ունենալու</td><td>ԲՍԿՊ-ի նախագիծը կիրապարակվի և կքննարկվի Արենի համայքնում կայանալիք հանրային քննարկման ժամանակ: ԲՍԿՊ-ի նախագիծը կիրապարակվի հայերեն և անգլերեն լեզուներով ՀՏԶՀ-ի կայքում (atdf.am), իսկ հայերեն լեզվով՝ շահառուի կայքում (www.sevancity.am).և սոցիալական լրատվության էջում:<br>Նախատեսվող աշխատանքների մասին համառոտ տեղեկատվություն և կոնտակտային տվյալները՝ հարցերին ու դժգոհություններին անդրադառնալու համար, կտեղադրվեն Ծաղկունք համայքնապետարանի տեղեկատվական տախտակին, շինարարական հրապարակում և/կամ նրա անմիջական տարածքում:</td></tr>
<tr><td colspan="2">ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ</td></tr>
<tr><td colspan="2">Կից ներկայացվող նյութ 1: տեղանքի քարտեզ /լուսանկար<br>Կից ներկայացվող նյութ 2: Շինարարական թափոնների հեռացման թույլտվության պատճենը<br>Կից ներկայացվող նյութ 3 : Սեփականատերերի համաձայնությունները<br>Կից ներկայացվող նյութ 4: Նվիրաբերված հողի սեփականության վկայականը<br>Կից ներկայացվող նյութ 5: Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ հանրային քննարկման արձանագրություն<br>Կից ներկայացվող նյութ 6: Խորքային հորի հետ կապված ԴԱՐ հիմադրամի հիմնավորումը</td></tr>
</table>

| Կից ներկայացվող նյութ 7: Շինարարության թույլտվություն (կտրամադրվի) |
| --- |

**Աշխատանքների վերահսկողի և իրականացնողի (կապալառուի) վերաբերյալ և հավելվածները կներկայացվեն ընտրված կապալառուի կողմից շինարարության մեկնարկի տրմանը զուգահեռ

**Շինարարության թույլտվությունը կձեռքբերվի աշխատանքների մեկնարկից առաջ:

## ՄԱՍ Բ: ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<table>
<tr><th colspan="4">ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ /ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ</th></tr>
<tr><td rowspan="11">Արդյո՞ք իրականացվող գործողությունները ներառելու են նշվածներից որևէ մեկը</td><th>Գործողություն</th><th>Կարգավիճակ</th><th>Խթանիչ գործողություններ</th></tr>
<tr><td>1. Ճանապարհի և այգու վերականգնում</td><td>[x] այո [ ] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Ա հատվածը</td></tr>
<tr><td>2. Նոր շինարարություն</td><td>[ x] այո [] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Ա հատվածը</td></tr>
<tr><td>3. Կեղտաջրերի անհատական մաքրման համակարգ</td><td>[ ] այո [x] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Բ հատվածը</td></tr>
<tr><td>4. Պատմական շենքեր և շրջաններ</td><td>[ ] այո [x] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Գ հատվածը</td></tr>
<tr><td>5. Հողը հետ վերցնելու անսպասելի կարիք</td><td>[ ] այո [x] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Դ հատվածը</td></tr>
<tr><td>6. Վտանգավոր կամ թունավոր նյութեր [2]</td><td>[ ] այո [x] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Ե հատվածը</td></tr>
<tr><td>7. Ազդեցությունը անտառների և/կամ պահպանության տակ գտնվող տարածքների վրա</td><td>[ ] այո [x] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Զ հատվածը</td></tr>
<tr><td>8. Բժշկական թափոնների կարգավորում/կառավարում</td><td>[ ] այո [x] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Է հատվածը</td></tr>
<tr><td>9. Երթևեկության և հետիոտնային անվտանգություն</td><td>[x] այո [ ] ոչ</td><td>Եթե «այո», ապա տես ստորև ներկայացված Ը հատվածը</td></tr>
<tr><td>10. Սոցիալական ռիսկերի կառավարում</td><td>[x] այո [ ] ոչ</td><td>If “Yes”, See Section I below</td></tr>
</table>

[2] Թունավոր / վտանգավոր նյութերը ներառում են սակայն չեն սահմանափակվում ասբեստ, թունավոր ներկեր, վնասակար լուծիչներ, կապարի ներկերի հեռացում և այլն:

| Գործունեություն | Պարամետր | Մեղմացնող միջոցառումներ |
|---|---|---|
| **0**. Ընդհանուր պայմաններ | Ծանուցում եւ աշխատողների անվտանգություն | (ա) Կառուցապատման և բնապահպանական հարցերով զբաղվող տեղական տեսչությունները ծանուցվել են առաջիկա գործողությունների մասին:<br>(բ) Հանրությունը աշխատանքների մասին իրազեկվել է՝ լրատվամիջոցներով և/կամ հանրությանը հասանելի կայքերի միջոցով համապատասխան ծանուցման միջոցով (այդ թվում աշխատանքների տեղամասում տեղադրվել են տեղեկատվական ցուցանակներ):<br>(գ) Ձեռք են բերվել կառուցապատման և/կամ հիմնանորոգման համար պահանջվող բոլոր իրավական թույլտվությունները:<br>(դ) Կապալառուն ֆորմալ կերպով համաձայնել է, որ բոլոր աշխատանքներն իրականացվելու են անվտանգ և օրինապահ եղանակով, որոնք նախագծվել են այնպես, որ հարևան բնակչության և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հասցվեն նվազագույնի:<br>(ե) Աշխատողների անհատական պաշտպանիճ սարքավորումներ/միջոցները համապատասխանում են միջազգային լավ գործելակերպին (միշտ կրում են պաշտպանիչ գլխարկներ, ըստ անհրաժեշտության՝ դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, անվտանգության գոտիներ և կոշիկներ):<br>(զ) Տեղամասում տեղադրված համապատասխան նշանները տեղեկացնում են աշխատողներին այն հիմնական կանոնների և կարգերի մասին, որոնց նրանք պետք է հետևեն: |
| **Ա. Ընդհանուր Վերականգնման կամ շինարարական տվյալներ** | Օդի որակ | (ա) Հողային աշխատանքների ժամանակ փոշին ճնշվում է ջրի շարունակական ցողման և/կամ տեղում փոշու էկրանների տեղադրման միջոցով:<br>բ) շրջակա միջավայրը (մայթեր, ճանապարհներ) զերծ է բեկորներից՝ նվազագույնի հասցնելու փոշին:<br>(գ) Շինարարության/թափոնների բաց այրումը տեղանքում չի իրականացվում:<br>(դ) Շինարարական տրանսպորտային միջոցների չափազանց կուտակումներ տեղամասերում չկան: |
| | Աղմուկ | (ա) Շինարարական աղմուկը պետք է սահմանափակվի թույլտվության մեջ սահմանված ժամերով:<br>(բ) Աշխատանքների ընթացքում գեներատորների շարժիչների ծածկերը, օդի |

| | | |
|---|---|---|
| | | կոմպրեսորները և հոսանքով աշխատող այլ մեխանիկական սարքավորումները պետք է լինեն ծածկված, և սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորինս հեռու: |
| | Ջրի որակ | ա) Կիրառվում են էրոզիայի և նստվածքների դեմ պայքարի համապատասխան միջոցներ, ինչպիսիք են, օրինակ՝ խոտի դեզեր և/կամ տիղմային ցանկապատեր՝ կանխելու նստվածքի տեղաշարժը տեղամասից դուրս և մոտակա առվակներում և գետերում ավելորդ պղտորություն կանխելու համար:<br>բ) Անձրևաջրերը հեռացվում են շինհրապարակից՝ օգտագործելով անձրևաջրերի դրենաժային համակարգը: |
| | Թափոնների կառավարում | (ա) Քանդման և կառուցապատման աշխատանքներից ակնկալվող բոլոր թափոնների գլխավոր տեսակների համար պետք է նախանշվեն թափոնների հավաքման և հեռացման ուղիները:<br>(բ) Կառուցապատման և քանդման արդյունքում առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն ընդհանուր աղբից, օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղում թափոնների տեսակավորման և համապատասխան տարաներում պահպանման միջոցով:<br>(գ) Շինարարական թափոնները պետք է հավաքվեն և հեռացվեն համապատասխան կարգով լիցենզիա ստացած աղբահանող ընկերությունների կողմից:<br>(դ) Թափոնների հեռացման մասին արձանագրությունները պետք է պահվեն որպես ապացույց առ այն, որ կառավարումը պատշաճ իրականացվել է՝ ըստ նախատեսվածի:<br>(ե) Իրագործելիության դեպքում, կապալառուն կրկնօգտագործում և վերամշակում է համապատասխան կենսունակ նյութերը (բացի ասբեստից): |
| | Հողային աշխատանքներ | ա) Հողային աշխատանքներից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը կպահվեն առանձին և կօգտագործվեն հետլիցքի և տեղամասի վերականգնման համար:<br>բ) 30 մ-ից ոչ ավելի հաստությամբ հողի վերին շերտը առանձին կհանվի և ժամանակավորապես կհավաքվի տեղում:<br>գ) լցակույտի բարձրությունը չի գերազանցի 3,0 մ-ը, իսկ թեքության անկյունը չի գերազանցի 34-ը:<br>դ) Ժամանակավոր պաշարները պետք է սեղմվեն և ծածկվեն բրեզենտով, որպեսզի կանխվի անձրևաջրերի հետևանքով առաջացած էրոզիան:<br>ե) հողի վերին շերտը կվերօգտագործվի հետլիցքի համար՝ հեշտացնելու հողամասի վերամշակումը: |

| | | |
|---|---|---|
| | | գ) Ընդերքի ավելցուկային քանակությունը կտեղափոխվի համաձայնեցված վայր: |
| **Ը.** Երթևեկության և հետիոտնային ապահովություն | Շինարարական աշխատանքներով պայմանավորված ուղղակի և անուղղակի վտանգ հանրային երթևեկության և հետիոտների համար | (ա) Պետական նորմերի համաձայն կապալառուն ապահովում է կառուցապատման տեղամասի պատշաճ անվտանգությունը և շինարարության հետ կապված երթևեկության կարգավորումը: Սա ներառում է նաև՝<br>▪ նշանների տեղադրում, նախազգուշացնող նշաններ, խոչընդոտներ և շրջանցում, տեղամասը պետք է հստակ տեսանելի լինի, իսկ հանրությունը պետք է տեղեկացված լինի պոտենցիալ վտանգների մասին,<br>▪ երթևեկության կառավարման համակարգ և աշխատակազմի վերապատրաստում, մասնավորապես տեղամասի մուտքի և տեղամասի մոտակայքում խիտ երթևեկության մասով: Անվտանգ անցումներ հետիոտների համար այն վայրերում, որտեղ շինարարական աշխատանքների հետ կապված երթևեկությունը խոչընդոտներ է ստեղծում,<br>▪ աշխատանքային ժամերի համապատասխանեցում տեղական երթևեկության մոդելին. օրինակ, ծանրաբեռնված ժամերին կամ խոշոր եղջերավոր անասունների շարժի ժամանակ խուսափել խոշոր տրանսպորտային աշխատանքներից,<br>▪ երթևեկության ակտիվ կառավարում տեղամասում՝ պատրաստված և տեսանելի աշխատողների կողմից, եթե դա անհրաժեշտ է հանրության հարմարավետ երթևեկության համար,<br>▪ դեպի այլ օբյեկտներ, խանութներ, բնակելի տներ անվտանգ և անխափան մուտքի ապահովում վերանորոգման աշխատանքների ընթացքում, եթե տվյալ շինությունները բաց են հանրության համար: |
| **Թ.** Սոցիալական ռիսկերի կառավարում | Հանրային կապերի կառավարում | Շինարարն ունի տեղական հետադարձ կապն ապահովող անձնավորություն ով նշանակված է ապահովելու տեղական բնակչության հետ հաղորդակցությունը և առաջարկություններ/բողոքներ ստանալը<br><br>(ա) Տեղական բնակչության հետ իրականացվել են խորհրդակցություններ նույնականացնելու և ակտիվ ձևով կառավարելու տեղական բնակչության և դրսից բերված աշխատուժի միջև ծագող հնարավոր կոնֆլիկտները |

| | | |
|---|---|---|
| | | (բ)Կապալառուն բարձրացնում է տեղական բնակչության իրազեկվածությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկերի վերաբերյալ , որոնք կարող են կապված լինել դրսից բերված աշխատուժի հետ<br><br>(գ) Բնակչությունը համապատասխան դեպքերում իրազեկված է շինարարական աշխատանքների ժամանակացույցի վերաբերյալ, ծառայությունների կասեցման, երթևեկության տարանցիկ ուղիների և ավտոբուսների ժամանակավոր կանգառների, պայթեցման և քանդման աշխատանքների,<br><br>(դ) Շինարարական աշխատանքները չեն իրականացվում գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում գիշերային աշխատանքների համար կկազմվեն պատշաճ ժամանակացույցեր և համայնքները պատշաճ կերպով կտեղեկացվեն այդ մասին, այնպես որ հնարավոր կլինի ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:<br><br>Ցանկացած ծառայության դադարեցումից նվազագույնը հինգ օր առաջ (ներառյալ ջուր, էլեկտրէներգիա, հեռախոս, ավտոբուսային երթուղիներ), համայնքի անդամները իրազեկվում են նախօրոք ծրագրի վայրում, ավտոբուսային կազառներում և ազդակիր տներում հայտարարությունների միջոցով: |
| | Աշխատանքի կառավարում | ա) Հնարավորության սահմաններում հիմնել աշխատանքային ճամբարները համայնքներից հեռու:<br>(բ) ձեռնարկել աշխատանքային ճամբարների նիստեր և շահագործում՝ խորհրդակցելով հարևան համայնքների հետ:<br>(գ) Հնարավորության սահմաններում հավաքագրել ոչ հմուտ կամ կիսահմուտ աշխատողների տեղական համայնքներից: Որտեղ և երբ հնարավոր է, տրամադրել աշխատողների հմտությունների ուսուցում՝ տեղական բնակչության մասնակցությունը բարձրացնելու նպատակով:<br>դ) Աշխատանքի վայրում ապահովել համապատասխան սանհանգույց (սանհանգույցներ և լվացվելու տարածքներ տարածքներ) տաք և սառը հոսող ջրի, օճառի և ձեռքի չորացման սարքերի համապատասխան պաշարներով: Ստեղծել ժամանակավոր մաքուր տարածք ցանկացած աշխատանքային ճամբարի համար՝ առանց մոտակայքում գտնվող ջրահոսքերի աղտոտման:<br>ե) բարձրացնել աշխատողների իրազեկվածությունը տեղական բնակչության հետ ընդհանուր հարաբերությունների կառավարման վերաբերյալ, սահմանել վարքագծի |

| | | |
|---|---|---|
| | | կանոններ՝ միջազգային պրակտիկային համապատասխան<br>զ) և խստորեն կիրառել դրանք, ներառյալ աշխատողներին աշխատանքից հեռացնելը և համապատասխան մասշտաբի ֆինանսական տույժեր կիրառելը: |
| | Բողոքների Լուծման Մեխանիզմի (ԲԼՄ) կառավարում | (ա) ԲԼՄ-ն ստեղծվել և գովազդվում է տեղական մակարդակում: Կապալառուն տեղեկացվում է ստացված բանավոր և ոչ բանավոր բողոքները գրանցելու և ԾԻԳ-ին հայտնելու իր պատասխանատվության մասին:<br>(բ) ԲԼՄ կոնտակտային տվյալները, ներառյալ տեղական կենտրոնական կետերը, տեղադրվել են շինհրապարակում և տեղական համայնքի վարչական գրասենյակում<br>(գ) ԲԼՄ տեղական համակարգողը ստանում և գրանցում է բնակչության բողոքները ԲԼՄ մատյանում և պարբերաբար հաղորդում է բողոքները ԾԻԳ-ին: |

## ՄԱՍ Դ: ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

| **Գործունեություն** | **Ինչ** (պարամետր է վերահսկվելու) | **Որտեղ** (է պարամետրը վերահսկվելու) | **Ինչպես** (է պարամետրը վերահսկվելու) | **Երբ** (սահմանել հաճախականությունը/կամ շարունակականությունը) | **Ինչու** (է պարամետրը վերահսկվելու) | **Ով** (է պատասխանատու պարամետրի վերահսկման համար) |
|---|---|---|---|---|---|---|
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շինարարա-կան նյութերի մատակա-րարում | Շինարարական նյութերի գնումը արտոնագրված մատակարարներից | Մատակարարների գրասենյակներ և պահեստներ փոխառության վայրերի | Փաստաթղթերի ստուգում Նյութերի որակի ստուգում | Նյութերի մատակարարման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ընթացքում | -Ապահովել շինարարության տեխնիկական որակը -Պաշտպանել մարդկանց առողջությունը և միջավայրը | ՀՏՋՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում<br><br>Շին տեխնիկայի և մեքենաների տեղաշարժը | Շինարարական տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը<br><br>Բեռնատար մեքենաների թափքի ծածկի ապահովումը՝ շինարարական թափոններ և նյութեր տեղափոխելիս և 20 կմ/ժ չգերազանցող արագությամբ:<br><br>Շինարարական տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով և աշխատանքային ժամերին (9:00-18:00):<br><br>Ջրցանման իրականացում՝փոշի առաջացնող շինարարական | Շին հրապարակի մուտքեր և ելքեր | Նախապես համաձայնեցված տեղափոխության երթուղիների ակնադիտական զննում<br><br>Վերակառուցվող ճանապարհի տեղամասի զննում | Չնախատեսված ամսական մոնիտորինգային ստուգայցեր | -Շրջակա միջավայրում արտանետումների կառավարում<br><br>-Աղմուկի և թրթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան<br><br>-Հետիոտնային անցումների անվտանգության, երթևեկության և արտակարգ պատահարների կառավարում | ՀՏԶՀ<br><br>Տեխնիկական հսկողությունն իրականացնող ընկերություն<br><br>Ճանապարհային ոստիկանություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | աշխատանքների ընթացքում | | | | | |
| 3.Շինարարական սարքավորումների պահպանություն | - մեքենաների և շինտեխնիկայի լվացում շինհրապարակից դուրս կամ բնական հոսքերից առավելագույն հեռավորության վրա<br>- շինհրապարակից դուրս կամ նախապես որոշված սահմանափակված տարածքում շինարարական սարքավորումների լիցքավորում կամ յուղում | Շինարարական հրապարակ | Իրականացման հսկողություն | Պատահական այցելություններ ի աշխատանքային ժամերին | - խուսափել սարքավորումների շահագործման պատճառով ջրի և հողի աղտոտումից նավթամթերքներից.<br><br>- հրդեհի դեպքում ժամանակին տեղայնացնել և նվազեցնել սպասվող վնասը | ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն |
| 4.Շինարարական | - Շինարարական աղբի ժամանակավոր | Շինարարության վայր | Ստուգաթերթեր | Ընթացքում և աշխատանքային | Խուսափել շրջակա | ՀՏԶՀ Տեխնիկական |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| թափոնների կուտակում | պեհաստավորրում հատուկ հատկացված տարածքներում<br>- Իներտ և վտանգավոր թափոնների ժամանակավոր պահեստավորրում նշանակված վայրերում<br>-Աղբի՝ ժամանակին տեղափոխում Ֆորմալ ձևավորված աղբավայրեր | Աղբի տեղափոխության համար նախատեսված աղբավայրեր | Դիտազննում | ժամերի | միջավայրի աղտոտումից | վերահսկողության կազմակերպություն |
| 5. Աշխատողների առողջություն և անվտանգություն | -Աշխատողներին հատուկ համազգեստի և պաշտպանական միջոցների<br>- Շինարարական սարքավորումների շահագործման և պաշտպանիչ համազգեստի օգտագործման կանոնների խիստ պահպանում | Շինարարական հրապարակ | Գործունեության ստուգում | Շինարարության ամբողջ ժամանակահատվածում | Նվազեցնել պատահարների հավանականությունները | ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | - աշխատանքի անվտանգության ուսուցման և հրահանգների գրառումների առկայություն<br>- Աշխատանքի վայրում առաջին օգնության բժշկական փաթեթների և կրակմարիչների առկայություն<br>- Արտակարգ իրավիճակների ծառայությունների (բժշկական, հրդեհային) կոնտակտային տվյալներ, որոնք տեղադրված են աշխատանքային վայրի տեղեկատվական տախտակին<br>- Աշխատանքային տարածքի ցանկապատում | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6.Գործունեություն մասնավոր սեփականության և այլ գույքի կողքին | Խուսափել մասնավոր գույքի սահմանների խախտումներից կամ պատահականորեն վնասելու դեպքերից (պատերի և ցանկապատերի հարևանությամբ կիրառել փոքր չափերի մեքենաներ կամ ձեռքով աշխատանք, շինարարական նյութերի պահեստավորումը և թափոնների հավաքումը կազմակերպել մասնավոր սեփականությունից հեռու և այլն ): Մասնավոր սեփականությանը ոչ դիտավորյալ վնասի հասցման դեպքում արագ վերականգնել նախնական վիճակը կամ ավելի լավ կարգավիճակը: | Մասնավոր սեփականության հարևանությամբ իրականացվող աշխատանքներ | Զննում և փորձաքննություն | Շինարարության ամբողջ ընթացքում | -Նվազեցնել մասնավոր սեփականությանը վնասի հասցման հավանականությունը:<br>-Բացառել մասնավոր սեփականության վրա սեփականատիրոջ կամ օգտագործողի իրավունքների ժամանակավոր կամ մշտական խախտումը: | ՀՏՁՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մասնավոր սեփականության վրա ակնկալվող ժամանակավոր ազդեցության դեպքում սեփականատերերին նախապես տեղեկացնել և երաշխավորել գույքի վերականգնումը, ձեռքբերել սեփականատերերի գրավոր համաձայնությունը միջամտության համար և անհապաղ վերականգնել վնասը: Եթե աշխատանքների ընթացքում մասնավոր հողի օգտագործման կարիք է առաջանում, չներխուժել ազդակիր տարածք մինչև տարաբնակեցման ծրագրի ամբողջական մշակումն ու իրականացումը: | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7.Շինհրապարակների վերամշակումը և կանաչապատումը | Անհրաժեշտության դեպքում, շինհրապարակի և մշտական մուտքի ճանապարհների և տարածքի կանաչապատում և ավարտական մաքրում | Շինհրապարակ և մուտքի ճանապարհներ | Զննում և փորձաքննություն | Շինարարության վերջնական փուլում | Նվազագույնի հասցնել լանդշաֆտի գեղագիտական արժեքի կորուստը շինարարական գործունեության արդյունքում | ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն |
| 8. Կոշտ թափոնների կառավարում | -Աղբամանների տեղադրում և կազմակերպում թափոնների պարբերաբար տեղափոխման համար | Շինհրապարակ | Զննում | Շինարարության ամբողջ ընթացքում | -Կանխել հողի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումը<br>-Պահպանել տեղանքի տարածքի և դրա շրջակայքի էսթետիկ տեսքը | ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն Գյումրու համայնքապետարան |
| 9. Փոշու կուտակում | - Շինարարական տարածքներում ջրի ցողման միջոցառումների | Շինարարական հրապարակ և մոտեցնող | Դիտազննում | Շինարարության ողջ ընթացքում | -Կանխարգելել տեղանքից դուրս փոշու | ՀՏԶՀ<br><br>Տեխնիկական վերահսկողութ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ապահովում և շինարարական աղբի ժամանակին հեռացում.<br>- Սորուն նյութերի պահեստավորում՝ պաստառների օգտագործմամբ տեղում | ճանապարհներ | | | տարածումը և աղտոտումը.<br>- Նվազեցնել փոշու ազդեցության հետ կապված աշխատողների և հարակից համայնքների առողջական ռիսկերը: | յան կազմակերպություն |
| 10. Պատմական գտածոներ | - Աշխատանքների դադարեցում ՝ անմիջապես փոփոխության գտածոների բացահայտումից հետո.<br>- Պաշտոնական հաղորդակցություն ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ ՝պատահական գտածոների վերաբերյալ<br>- Անհրաժեշտ պեղումների և տեղանքների պահպանման | Շինհրապարակ | - Պատահական գտածոների զննում.<br>- Ներկայացված փաստաթղթերի ստուգում | Շինարարության ամբողջ ընթացքում | Համոզվել, որ մշակութային հուշարձանը չի վնասվել շինարարական աշխատանքների ընթացքում | ՀՏՁՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն<br>ՀՀ Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ուղղությամբ ձեռնարկված ժամանակին պայմանավորվածությունններ | | | | | |
| 11. Հողային աշխատանքներ | -Հողի վերին շերտի վերամշակման համար հողի հեռացում և ժամանակավոր պահեստավորում<br>- Պեղված հողի ժամանակակից պահպանումը որոշված վայրերում.<br>- Անհրաժեշտության դեպքում պեղված հողի պահպանում և ավելցուկային զանգվածը գրավոր հաստատված վայրեր տեղափոխություն | Շինհրապարակ | Գործողությունների զննում | Հողային աշխատաքների ընթացքում | -Բուսականության կորստի սահմանափակում հողային աշխատանքների արդյունքում և մասնիկներով վերգետնյա ջրաամբարների աղտոտումը նվազագյունի հասցնել<br>-Նվազեցնել ստորգետնյա և վերգետնյա ջրերի աղտոտումը հողով: | ՀՏԶՀ Տեխնիկական վերահսկողության կազմակերպություն |
| 12. Բողոքների լուծման մեխանիզմի | Ենթածրագրի վերաբերյալ բողոքների կամ | Շին հրապարակ | Փորձաքննություն | Շինարարության ամբողջ | Բողոքի քննարկում և լուծում 2 | ՀՏԶՀ տեխնիկական վերահսկողակ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| գործածում | հարցերի վերաբերյալ հանրային իրավունք: Դիմում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարին (համայնքային իշխանություններին): Բողոքների համակարգողի նշանակում (բողոքների ստացում, վերանայում և բացատրություն, բողոքների գրանցքում մատյանում և փորձ լուծել դրանք ոտքի վրա):<br><br>Բողոքատուն կարող է դիմել անմիջապես ՀՏԶՀ՝ թեժ գիծ ծառայության (010 24 01 59), փոստային նամակի (Երևան 0037, Կ. Ուլնեցի 31), էլեկտրոնային նամակի (support@atdf.am).կամ | | | ընթացքում | շաբաթվա ընթացքում:<br><br>Խնդրի լուծման ձախողման դեպքում նախարարությ ան կամ իրականացնող կազմակերպու թյան մակարդակում , ԾԱԵԱ-ն կարող է դիմել դատարանին որոշման կայացման համար՝ ՀՀ օրենսդրությա ն համաձայն | ան ընկերություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀՏԶՀ-ի կայքում տեղադրված գործիքի միջոցով (http://atdf.am/hy/Home/ContactUs): | | | | | |
| **ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ** | | | | | | |
| Վայրի պահպանումն ու շահագործումը | Չթույլատրված շինարարություն և հողօգտագործում | Կայանատեղի, վերանորոգված ճեմուղի և ճանապարհ | Տեսանելի հսկողություն | Շահագործման ողջ ընթացքը | Կանխել կենտրոնական հատվածի տարածքի գեղագիտական և վերականգնողական արժեքի կորուստը | Վանաձորի համայնքապետարան |
| 3.Կոշտ թափոնների կառավարում | Տեղադրված են աղբամաններ, պարբերաբար իրականացվում է թափոնների տեղափոխում | Ամբողջ տարածքում | Դիտազննում | Գործառնության ամբողջ ընթացքում | -Կանխել հողի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումը<br>-Պահպանել տեղանքի տարածքի և դրա շրջակայքի էսթետիկ տեսքը | Վանաձորի համայնքապետարան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կենցաղային ցանցերի /խմելու ջրի և կոյուղագծերի շահագործում և պահպանում | Կատարվում է կոմունալ ցանցերի կանոնավոր սպասարկում | Կառուցված ջրագծեր | Տեխնիկական պարբերաբար ստուգումներ | Շահագործման ողջ ժամանակահատվածը | - Կոմունալ ցանցերի անվտանգ և շահագործելի վիճակում սպասարկում;<br>- Խուսափեք խափանումներից և բնակիչների համար անհարմարություններ ստեղծելուց: | Վանաձորի համայնքապետարան |

## Կից ներկայացվող նյութ 1: տեղանքի քարտեզն ու լուսանկարները




Քայրտեզ 1: Google քարտեզի պատկեր




* տարածքում առկա շինությունները (մասնավոր սեփականություն), որոնք ընկնելու են ազդեցության տակ, նշված են սևով

Քարտեզ 2: ազդեցության տակ ընկնող տարածքը կադաստրային քարտեզի վրա (պատկերը՝ նախագծի փարթերից)




Քարտեզ 3: առկա և նախագծված ստորգետնյա խողովակաշարի պատկերը քարտեզի վրա




Քարտեզ 4: ընդհանուր պլան (պատկերը վերցված է նախագծից)


Նկար  1.զբոսայգի տանող ճանապարհ


Նկար  2. Եկեղեցի տանող ճանապարհ


նկար 3. Համայնքապետարան տանող ճանապարհը


նկար 4. Զբոսայգու ձախակողմյան հատվածի տարածքը


Նկար  5. Ռեստորանը


նկար 6.  Զբոսայգու աջակողմյան հատվածի տարածքը



նկար 7.  Վերականգնման ենթակա պատը




Նկար  8. Տեղանքում գտնվող խանութը

## Կից ներկայացվող նյութ 2: Շինարարական աղբը տեղափոխելու վերաբերյալ թույլտվություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հեռ. (0261) 4-00-01, (0261) 2-43-23
Կայք sevancity.am

30 մայիսի 2023թ.

N ՍՀ-1/1080

Տեղեկանք

Տրվում է այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Ծաղկունքի բնակավայրի կենտրոնական հատվածի վերակառուցման» ծրագրի շրջանակներում նախատեսվող շինարարական աշխատանքների ընթացքում գոյացած շինարարական թափոնները անհրաժեշտ է տեղափոխել Ծաղկունք բնակավայրից հարավ-արևմուտք հասցեում գտնվող և մինչև 1.5կմ հեռավորության վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածք՝ հարթեցման աշխատանքներ կատարելու համար:

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հեռ. (0261) 4-00-07




**Վերը նշված փաստաթղթի ոչ պաշտոնական թարգմանություն**

ՀՀ N-ՍՀ-1/1080

30 մայիսի 2023

Տրվում է այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի «Ծաղկունք բնակավայրի կենտրոնական մասի վերանորոգում» ենթանախագծով շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել Ծաղկունք համայնքից 1.5կմ հարավ-արևմուտք գտնվող համայնքին պատկանող տարածք՝ հարթեցման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Համայնքապետ՝ Սարգիս Մուրադյան /կնքված է և ստորագրված/

## Կից ներկայացվող նյութ 3: սեփականատերերի համաձայնությունները



ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

13 ը մարտի, 2023թ.

Ես՝ Արթուր [illegible] Առաքելյան-ս, (անձնագրի/նույնականացման քարտի համար՝ AR 0391822, տրված՝ 050-ի կողմից), հանդիսանալով ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի Գյուղ Ծաղկունք 2փ. 1տ հասցեում գտնվող անշարժ գույքի (բնակելի տուն, կադաստրային ծածկագիր՝ 05-047-0015-0001-001 և 05-047-0015-0001-002) սեփականատեր (համասեփականատեր), սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ «ԴԱՐ» տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամի պատվերով «ՍՊ2» ՍՊԸ-ի կողմից նախագծված՝ «ՀՀ Գեղարքունիք մարզ, Սևան համայնք, Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածի վերակառուցում» նախագծով նախատեսված՝ արտաքին պատի վերակառուցման աշխատանքների իրականացման համար անհատույց օգտագործվի սեփականության իրավունքով ինձ պատկանող վերը նշված անշարժ գույքը:

Արթուր Առաքելյան [signature]

անուն, ազգանուն

ստորագրություն

**Վերը նշված փաստաթղթի ոչ-պաշտոնական թարգմանություն**

Համաձայնություն

13 մարտի 2023

Ես՝ Արթուր Առաքելյանս (ՆՔ/անձնագրի համար AR 0391822, տրված 050 կողմից) հանդիսանալով ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի գյուղ Ծաղկունք 2փ. 1 տուն հասցեում գտնվող տան սեփականատերը (կադաստրային կոդ 05-047-0015-001-001 և 05-047-0015-001-002) տալիս եմ իմ համաձայնությունը առ այն, որ ,,ԴԱՐ,, տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամի պատվերով ,,ՍՊ2,, ՍՊԸ կողմից նախագծված ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածի վերակառուցում» նախագծով նախատեսված արտաքին պատի վերակառուցման աշխատանքների իրականացման համար անհատույց օգտագործվի սեփականության իրավունքով ինձ պատկանող վերը նշված անշարժ գույքը:

Արթուր Առաքելյան /ստորագրություն/




**Վերը նշված փաստաթղթի ոչ-պաշտոնական թարգմանություն**

Համաձայնություն

20 հունվարի 2023

Ես՝ Սեդա Մարությանս (ՆՔ/անձնագրի համար 00501894, տրված 050 կողմից) հանդիսանալով ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի գյուղ Ծաղկունք 2փ․ 3-րդ տուն հասցեում գտնվող տան սեփականատերը (կադաստրային կոդ 05-047-015-005) տալիս եմ իմ համաձայնությունը առ այն, որ ,,ԴԱՐ,, տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամի պատվերով ,,ՍՊ2,, ՍՊԸ կողմից նախագծված ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածի վերակառուցում» նախագծով նախատեսված արտաքին պատի վերակառուցման աշխատանքների իրականացման համար անհատույց օգտագործվի սեփականության իրավունքով ինձ պատկանող վերը նշված անշարժ գույքը։

Սեդա Մարության/ստորագրություն/



ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

24-ը հունվարի, 2023թ.

Ես՝ Գայանե Դավթյան-ս, (անձնագրի/նույնականացման քարտի համար՝ 000708222, տրված՝ 050-ի կողմից), հանդիսանալով ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի Ծաղկունք 1փ. 1կ. հասցեում գտնվող անշարժ գույքի (խանութ, կադաստրային ծածկագիր՝ 2217009) սեփականատեր (համասեփականատեր), սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ «ԴԱՐ» տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամի պատվերով «ՍՊ2» ՍՊԸ-ի կողմից նախագծված՝ «ՀՀ Գեղարքունիք մարզ, Սևան համայնք, Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածի վերակառուցում» նախագծով նախատեսված դեպի խանութ տանող թեքահարթակի կառուցման, ինչպես նաև խանութի կողային պատին կից բաշխիչ վահանի տեղադրման աշխատանքների իրականացման համար անհատույց օգտագործվի սեփականության իրավունքով ինձ պատկանող վերը նշված անշարժ գույքը:

Գայանե Դավթյան — անուն, ազգանուն

[ստորագրություն] — ստորագրություն

**Վերը նշված փաստաթղթի ոչ-պաշտոնական թարգմանություն**

Համաձայնություն

24 հունվարի 2023

Ես՝ Գայանե Դավթյանս, (ՆՔ/անձնագրի համար 00708222, տրված 050-ի կողմից) հանդիսանալով ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի գյուղ Ծաղկունք 1փ. 1-ին տուն հասցեում գտնվող տան սեփականատերը (կադաստրային կոդ 2217009) տալիս եմ իմ համաձայնությունը առ այն, որ ,,ԴԱՐ,, տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամի պատվերով ,,ՍՊ2,, ՍՊԸ կողմից նախագծված ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածի վերակառուցում» նախագծով նախատեսված արտաքին պատի վերակառուցման աշխատանքների իրականացման համար անհատույց օգտագործվի սեփականության իրավունքով ինձ պատկանող վերը նշված անշարժ գույքը։

Գայանե Դավթյան /ստորագրություն/

## Կից ներկայացված փաստաթուղթ 4: նվիրաբերվող հողամասի սեփականության վկայականը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է 13 դեկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Գեղարքունիք, համայնք Ծաղկունք 1-ին փողոց 2/1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նվիրաբերության պայմանագիր 03/12/2021թ սմ 4869

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 05-047-0020-0017

Մակերեսի չափը (հա)՝ 0.05

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 13122021-05-0053, գաղտնաբառ՝ 5AALTM3DVVIJ

էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 05-047-0020-0017-001-000 | Կիսակառույց շինություն | 125.32 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարվել է 10/12/2021թ.-ին, և տրամադրվել է N 10122021-05-0033 վկայականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 13122021-05-0053, գաղտնաբառ՝ 5AALTM3DVVIJ

էջ 2/2

**Վերը նշված փաստաթղթի ոչ պաշտոնական թարգմանությունը**

Սույն վկայականը հաստատում է 13 դեկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցումը հետևյալ տվյալներով:

Գրանցման իրավունքի սուբյեկտներ՝ – ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղական համայնք.

Անշարժ գույքի գտնվելու վայրն ու անվանումը – Գեղարքունիքի մարզ, Ծաղկունք համայնք, 1-ին փողոց 2/1

Գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը – անշարժ գույքի նվիրաբերության պայմանագիր N 4869, տրված 03/12/2021.

Հողամասի բնութագիրը

Կադաստրային ծածկագիր – 05-047-0020-0017

Մակերեսի չափը /հեկտար/ – 0.05 հ.

Նպատակային նշանակությունը՝- բնակելի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը – հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը – սեփականություն

**Կից ներկայացվող նյութ 5: Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ հանրային քննարկման արձանագրություն**

2023թ. օգոստոսի 4-ին ՀՏԶՀ մասնագետների, Սևան խոշորացված համայնքի և Ծաղկունք բնակավայրի բնակիչների մասնակցությամբ Ծաղկունքի համայնքապետարանում կայացավ հանրային լսումներ: Ընդհանուր առմամբ 15 մարդ՝ այդ թվում 7 կին մասնակցեցին հանդիպմանը:

2023թ. հուլիսի 28-ին հանրային լսումների վերաբերյալ հայտարարությունը տեղադրվել էր Սևան համայնքի կայքէջում և Facebook էջում:

Հանդիպման բացումը կատարեց Ծաղկունք բնակավայրի ղեկավար Սասուն Մինասյանը, ով ներկայացրեց հանդիպման նպատակն ու ենթանախագծի հայեցակարգը:

ՀՏԶՀ սոցիոլոգ Քնարիկ Գրիգորյանը ներկայացրեց շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող բնապահպանական և սոցիալական ժամանակավոր ազդեցությունները, ներառյալ շինարարական աղբի առաջացումը, ինչպես նաև տեղափոխումը, աղմուկի և փոշու առաջացումը: Ներկայացվեցին նաև նախատեսվելիք անվտանգության միջոցառումները՝ ներառյալ շինհրապարակի ցանկապատումը, շինհրապարակի վտանգավոր հատվածներում անվտանգության ժապավենների տեղադրումը, երթևեկության կառավարումը, ինչպես նաև անվտանգության նշանների տեղադրման պահանջները: Ներկայացվեցին աշխատանքի անվտանգության միջոցառումները, այդ թվում՝ համազգեստ կրելը և անհատական պաշտպանության միջոցները, ինչպես նաև շինանյութերի մատակարարման և շինարարական տեխնիկայի պահպանման պահանջները:

ՀՏԶՀ սոցիոլոգ մասնագետ Քնարիկ Գրիգորյանը նշեց, որ ծրագիրը սոցիալական բացասական ազդեցություններ չի ենթադրում, այդ թվում՝ հարկադիր վերաբնակեցում կամ հողի ժամանակավոր օգտագործում շինարարության ընթացքում: Նշվեց նաև, որ հողատարածքը բավարար է շինաշխատանքների համար, նախատեսված է ժամանակավոր պարիսպ և նախազգուշական նշաններ:

Հանդիպման մասնակիցներին ներկայացվեց ՏՏԵԶ ծրագրի բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ): Ներկայացվեցին նաև տեղի կենտրոնի (Սասուն Մինասյան) կոնտակտային տվյալները: Ներկայացվել են բողոքների ներկայացման,

վերլուծության և վերանայման ընթացակարգերը: Նշվեց, որ ԲԼՄ-ի վերաբերյալ տեղեկատվությունը հավելյալ կերպով կտեղադրվի Ծաղկունքի վարչական գրասենյակի տեղեկատվական տախտակին և շինհրապարակի մուտքի մոտ տեղադրվելիք ենթածրագրի տեղեկատվական տախտակին:

Բացատրվեցին ԲՍԿՊ-ով նախատեսված միջոցառումների իրականացման վերահսկողության և մշտադիտարկման: ընթացակարգերը:

Հարցեր չտրվեցին

## Կից ներկայացվող նյութ 6: Խորքային հորի վերաբերյալ ԴԱՐ հիմնադրամի համաձայնությունը



DAR
THE FOUNDATION OF REGIONAL DEVELOPMENT AND COMPETITIVENESS

37 Hanrapetutyan street
0010, Yerevan, RA
+37410 50 15 00, +37410 50 15 15
info@darfoundation.am

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի
Տնօրեն՝ Արթուր Սողոմոնյանին

26 հունվարի, 2023թ.

Հարգելի պրն. Սողոմոնյան,

Սույնով ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ Համաշխարհային Բանկի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» շրջանակներում ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից մշակվող «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի կենտրոնական հատվածի բարեկարգում» ենթածրագրի շրջանակներում նախատեսվող «խորքային հորի կառուցում, տեխնիկական սենյակի կառուցում, այգու կանաչապատում» աշխատանքները կիրականացվեն «ԴԱՐ» հիմնադրամի կողմից, վերջինիս միջոցներով:

Ենթածրագրով նախատեսվող աշխատանքների ծավալի ճշգրտման համար խնդրում ենք հիմք ընդունել սույն տեղեկատվությունը:

Հարգանքով՝

Մարգարիտա Գևորգյան
Գլխավոր տնօրեն

*Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի տնօրեն՝*
*Պրն. Սողոմոնյանին*

26 հունվարի 2023

*Հարգելի պարոն Սողոմոնյան*

Սույնով ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, որ Համաշխարհային Բանկի «Տեղական Տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» շրջանակներում, ՀՀ ԷՆ Զբոսաշրջային Կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից մշակվող «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի կենտրոնական հատվածի բարեկարգում» ենթածրագրի շրջանակներում նախատեսվող «խորքային հորի կառուցում» տեխնիկական սենյակի կառուցում, այգու կանաչապատում» աշխատանքները կիրականացվեն «ԴԱՐ» հիմնադրամի կողմից՝ վերջինիս միջոցներով:

Ենթածրագրով նախատեսվող աշխատանքների ծավալի ճշգրտման համար, խնդրում ենք հիմք ընդունել սույն տեղեկատվությունը:

*Հարգանքով*

*Մարգարիտա Գևորգյան*

Գլխավոր տնօրեն */ստորագրված և կնքված/*

## Կից ներկայացվող նյութ 7: շինարարության թույլտվություն (կտրամադրվի)